# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

---

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

20 մարտի 2026 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Վարդանյանը, Ծովինար Հովհաննիսյանը, Եղիշե Նազարյանը, Նեկտար Հովհաննիսյանը, Մուշեղ Ներսիսյանը, Սամվել Ոսկանյանը, Սոնա Մարգարյանը, Կարեն Մանասերյանը, Մարատ Շահբազյանը և Տիգրան Նազարյանը:

**Նիստին մասնակցում էին՝**

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական Սամվել Օրդոյանը և համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը**

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 9 նստաշրջանի երկրորդ՝ 2026 թվականի մարտի 20-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի մարտի 20-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը հաստատելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

6) Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2026 թվականի (ամենամյա) ծրագիրը հաստատելու մասին:

7) Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման 2026 թվականի (ամենամյա) ծրագիրը հաստատելու մասին:

8) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 3-ի N 130-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

9) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 20-ի N 17-Ն որոշումն անվավեր ճանաչելու մասին:

10) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 20-ի N 13-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

11) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջներն ու պայմանները սահմանելու մասին:

12) Հողատեսքի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

13) 0.7 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

14) Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի գործառնական նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

15) Համայնքի վարչական տարածքում գովազդային վահանակի տեղադրման համար համաձայնություն տալու մասին:

16) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու մասին:

17) Գույք նվիրաբերելու մասին:

18) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ

Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 25-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 20-ի թիվ 83-Լ որոշմամբ հաստատված համայնքային սոցիալական ծրագիրը (X գլուխ, 3-րդ պարբերություն) և ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցության գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 26-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու անդամների կողմից ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացությունը (վերլուծությունը)՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 27-Ն)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետի, 82.1-ին հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 28-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 29-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ (ԱՄԵՆԱՄՅԱ) ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և համաձայն 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2026 թվականի (ամենամյա) ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 30-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ (ԱՄԵՆԱՄՅԱ) ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և համաձայն 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջների՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման 2026 թվականի (ամենամյա) ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 31-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 130-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով քաղաքացի Համիկ Արշակի Նազարյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 3-ի «Վարձակալության իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին» N 130-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 32-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N 17-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Ընդունման օրվանից անվավեր ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 20-ի՝ «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման

համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջներն ու պայմանները սահմանելու մասին» N 17-Ն որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

| | | |
|---|---|---|
| Կողմ -11 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 33-Ն)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 20-ի՝ «0.01 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին» N 13-Ա որոշման հիմնական մասի 1-ին կետում «կառուցապատման» բառից հետո լրացնել «, դեղատնային գործունեություն ծավալելու նպատակով» կետադրական նշանը և բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

| | | |
|---|---|---|
| Կողմ -11 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 34-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՄ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման կամ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ

Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 35-Ն)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 1667-Ն հրամանով հաստատված հավելվածի՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների ցանկի 14 կետը և «Թավիթիան Վինյարդս» ՍՊԸ-ի տնօրենի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, «Թավիթիան Վինյարդս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.75125 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-014-0195-0011, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 12022026-10-0010) խաղող, վարելահող հողատեսքերի նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն (գինու գործարան) հիմնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ

Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 36-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***0.7 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064 որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 28-ի N 2/փ-112 դրական եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, «Թավիթիան Վինյարդս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.7 հա խոտհարք հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 14122022-10-0020, կադաստրային ծածկագիր՝ 10-014-0128-0047) նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 37-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 29-րդ և 42-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի սույն թվականի N 01/20.1/6401-2026 գրությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող, Եղեգնաձոր բնակավայրի Ն. Մշեցի 9/1 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 05112024-10-0010, կադաստրային ծածկագիր՝ 10-001-0101-0010-001) կրթական և ուսումնական գործառնական նշանակությունը բնակելի գործառնական նշանակության փոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 38-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 29-րդ և 42-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով «Մառ Վայն» ՍՊԸ-ի հայտը և այն հանգամանքը, որ հայտով ներկայացված գովազդային վահանակի տեղադրումը համապատասխանում է Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի N 40-Ն որոշմամբ սահմանված պայմաններին՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Երևանյան խճուղու (Մ2) 39⁰44′56.3″N 45⁰19'08.6''E կոորդինատներում «Մառ Վայն» ՍՊԸ-ի կողմից գովազդային վահանակի տեղադրման համար՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 39-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի

Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով անկախ գնահատող կազմակերպության կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասով հաշվարկված շուկայական արժեքները՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 40-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ.</u>**

***ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, քննարկելով Մալիշկա բնակավայրի 22-րդ փողոցի բնակիչներից ստացված դիմումը, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածի՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի 2026 թվականի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 02 դաս 04 (ոռոգում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածով ձեռք բերվող՝ 12 դյույմ տրամագծով, ընդհանուր 480 մետր երկարությամբ, պոլիէթիլենային խողովակը նվիրաբերել Մալիշկա բնակավայրի 22-րդ փողոցի բնակիչներին՝ նշված փողոցի ոռոգման առվի վերանորոգման աշխատանքներում օգտագործելու համար:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված փողոցի ոռոգման առվի վերանորոգման աշխատանքներն իրականացվելու են բնակիչների ուժերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ
Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 41-Ա)*

**ԼՍԵՑԻՆ.**

***ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2026 թվականի ապրիլի 17-ը, ժամը՝ 18:30, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վ. ԱՎԱԳՅԱՆ
Ա. ԲԱՅԱԹՅԱՆ

Ա. ԲԱԲԱՅԱՆ
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԱՐԳՍՅԱՆ
Ծ. ՍԱՐԳՍՅԱՆ
Դ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 42-Ա)*

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ ____________

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ ____________

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ ____________

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ ____________

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ ____________

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ ____________

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ ____________

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ ____________

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

*Նիստն արձանագրեց*՝ Մարինե Հովհաննիսյանը

____________________________